# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

***12 ապրիլ 2024թ.***

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/03
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Նարեկ Ալիխանյանը, Ռոբերտ Ալիխանյանը, Վարդան Ավագյանը, Արման Բազինյանը, Թաթուլ Գուլինյանը, Զարինե Ղամբարյանը, Արմենուհի Մաիլյանը, Սուրեն Մելիքյանը, Շուշանիկ Սահակյանը, Նունե Սանթրոսյանը

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**
Աշխեն Ամիրխանյան, Ալեքսանդր Հարությունյան, Հովհաննես Նաղդալյան, Վախթանգ Թամրազյան, Գեվորգ Ամիրխանյան, Գագիկ Շահնազարյան, Մարինե Սահակյան, Վարդան Գրիգորյան, Լիպարիտ Սանթրոսյան

**<u>Նիստը վարում էր ՀՀ Դիլիջան համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյանը</u>**

**<u>Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը</u>**

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 76/6 հասցեի բնակելի տունը և վերջինիս զբաղեցրած 45. 4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով

օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ.Դավիթ Սարգսյան
2. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 288/1 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 36. 5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/9 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 21. 6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոց թիվ 79/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20. 4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/15 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 49. 5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-023-0366-0126 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 12/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 26.4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
8. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 1-ին նրբ. թիվ 8/1 հասցեի պարիսպը, հարթակը և վերջիններիս զբաղեցրած 109. 8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
9. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/8 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 21. 6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10. Դիլիջան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին >> թիվ 007-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 203 հասցեի

ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 30.7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
14. Արևային ֆոտովոլտային համակարգերի տեղակայման միջոցառումներին համաձայնություն տալու և համաֆինանսավորում կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
15. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1156.5քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասի վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
16. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 32.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի պայմանները և տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
17. Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի խմելու ջրագծերի հիմնանորոգման և ջրաչափերի տեղադրման աշխատանքների ՇՄԱԳ փորձաքննությանը համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
18. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 8143.9քմ ընդհանուր մակերեսով թվով 9 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
19. Դիլիջան համայնքի 2024թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
20.Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 82/8 հասցեի 9.8քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
21.Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
22. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 21 հասցեի 33.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
23.Դիլիջան համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ղեկավարն առաջարկեց օրակարգում ընդգրկել ևս 2 հարց՝

1. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 21 հասցեի 33.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:

Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ավագանին (կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց առաջարկությունը և հաստատեց օրակարգը նոր խմբագրությամբ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 669-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 76/6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 45. 4ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 22-ի թիվ 268-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 76/6 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Զաքար Վալիկի Գաբրիելյանի կողմից ինքնակամ կառուցված 96. 1678քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 20032024-11-0060/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Զաքար Գաբրիելյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 76/6 հասցեի բնակելի տունը՝ 96. 1678քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 45. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 786172 դրամ և 477327 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված բնակելի տունը և վերջինիս զբաղեցրած 45. 4քմ հողամասը քաղ. Զաքար Վալիկի Գաբրիելյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 76/6 հասցեի բնակելի տունը՝ 96. 1678քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 45. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 786172 դրամ և 477327 դրամ արժեքներով քաղ. Զաքար Վալիկի Գաբրիելյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 670-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 288/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 36.5ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 23-ի թիվ 272-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 288/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սամվել Սուրենի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված 36.5քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 12032024-11-0060/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սամվել Գևորգյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 288/1 հասցեի ավտոտնակը՝ 36.5քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 36.5քմ հողամասը, համապատասխանաբար, 84534 դրամ և 249452 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 36.5քմ հողամասը քաղ. Սամվել Սուրենի Գևորգյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 288/1 հասցեի ավտոտնակը՝ 36.5քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 36.5քմ հողամասը, համապատասխանաբար, 84534 դրամ և 249452 դրամ արժեքներով քաղ. Սամվել Սուրենի Գևորգյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 671-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 85/9 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 21.6ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մարտի 04-ի թիվ 339-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/9 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Հասմիկ Ղուկասի Քամալյանի կողմից ինքնակամ կառուցված 21.6քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է

/սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 14032024-11-0055/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Հասմիկ Քամալյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/9 հասցեի ավտոտնակը՝ 21.6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 21. 6քմ հողամասը, համապատասխանաբար, 58860 դրամ և 227099 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 21. 6քմ հողամասը քաղ. Հասմիկ Ղուկասի Քամալյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/9 հասցեի ավտոտնակը՝ 21.6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 21. 6քմ հողամասը, համապատասխանաբար, 58860 դրամ և 227099 դրամ արժեքներով քաղ. Հասմիկ Ղուկասի Քամալյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 672-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 79/4 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20. 4ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մարտի 04-ի թիվ 332-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոց թիվ 79/4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Թաթուլ Սամվելի Թովմասյանի կողմից ինքնակամ կառուցված 20. 4քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 14032024-11-0077/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Թաթուլ Թովմասյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոց թիվ 79/4 հասցեի ավտոտնակը՝ 20. 4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 47247 դրամ և 139420 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20. 4քմ հողամասը քաղ. Թաթուլ Սամվելի Թովմասյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոց թիվ 79/4 հասցեի ավտոտնակը՝ 20.4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.4քմ հողամասը, համապատասխանաբար, 47247 դրամ և 139420 դրամ արժեքներով քաղ. Թաթուլ Սամվելի Թովմասյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 673-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/15 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 49.5ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 23-ի թիվ 273-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/15 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Էդիկ Գուրգենի Մնացականյանի կողմից ինքնակամ կառուցված 49.5քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 13032024-11-0026/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Էդիկ Մնացականյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/15 հասցեի ավտոտնակը՝ 49.5քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 49.5քմ հողամասը, համապատասխանաբար, 114642 դրամ և 338298 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 49.5քմ հողամասը քաղ. Էդիկ Գուրգենի Մնացականյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/15 հասցեի ավտոտնակը՝ 49.5քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 49.5քմ հողամասը, համապատասխանաբար, 114642 դրամ և 338298 դրամ արժեքներով քաղ. Էդիկ Գուրգենի Մնացականյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 674-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ 11-023-0366-0126 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդված 5-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024թ. մարտի 19-ի թիվ 2/փ-114 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-023-0366-0037 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Գոշ գյուղի 11-023-0366-0037 ծածկագրով, 0.2հա հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես Բնակավայրերի հող, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման:
3. <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Դիլիջան համայնքի ավագանու 03.10.2022թ. թիվ 198-Ա և ՀՀ Տավուշի մարզպետի 26.10.2022թ. թիվ 299-Ա որոշումներով հաստատված Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 675-Ա/

Լսեցին

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/10***

***ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 26.4ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 23-ի թիվ 278-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 12/10 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Գայանե Ռազմիկի Սիմոնյանի կողմից ինքնակամ կառուցված 26. 4քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 13032024-11-0011/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գայանե Սիմոնյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 12/10 հասցեի ավտոտնակը՝ 26. 4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 26. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 61143 դրամ և 180426 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 26. 4քմ հողամասը քաղ. Գայանե Ռազմիկի Սիմոնյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 12/10 հասցեի ավտոտնակը՝ 26. 4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 26. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 61143 դրամ և 180426 դրամ արժեքներով քաղ. Գայանե Ռազմիկի Սիմոնյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 676-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 8/1 ՀԱՍՑԵԻ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 109. 8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 21-ի թիվ 263-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց, 1-ին նրբ. թիվ 8/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Վալերի Ազատի Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված 5. 7922քմ արտաքին մակերեսով պարսպի և 14. 0521քմ արտաքին մակերեսով հարթակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի

վկայական թիվ՝ 12032024-11-0039/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Վալերի Մանուկյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց, 1-ին նրբ. թիվ 8/1 հասցեի պարիսպը 5.7922քմ արտաքին մակերեսով, հարթակը 14.0521քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 109.8քմ հողամասը, համապատասխանաբար, 26830 դրամ, 97634 դրամ և 750407 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված պարիսպը, հարթակը և վերջինիս զբաղեցրած 109.8քմ հողամասը քաղ. Վալերի Ազատի Մանուկյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց, 1-ին նրբ. թիվ 8/1 հասցեի պարիսպը 5.7922քմ արտաքին մակերեսով, հարթակը 14.0521քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 109.8քմ հողամասը, համապատասխանաբար, 26830 դրամ, 97634 դրամ և 750407 դրամ արժեքներով քաղ. Վալերի Ազատի Մանուկյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 677-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 85/8 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 21.6ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2023թ. հոկտեմբերի 23-ի թիվ 930-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/8 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Գայանե Մանվելի Անանյանի կողմից ինքնակամ կառուցված 21.6քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 06032024-11-0050/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գայանե Անանյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/8 հասցեի ավտոտնակը՝ 21.6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 21.6քմ հողամասը, համապատասխանաբար, 58860 դրամ և 227099 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 21.6քմ հողամասը քաղ. Գայանե Մանվելի Անանյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 85/8 հասցեի ավտոտնակը՝ 21.6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 21.6քմ հողամասը, համապատասխանաբար, 58860 դրամ և 227099 դրամ արժեքներով քաղ. Գայանե Մանվելի Անանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 678-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 007-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջան համայնքի ավագանու կանոնակարգի 33-րդ կետի համաձայն դադարեցվել են համայնքի ավագանու <<Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Գոհար Ղազարյանի և <<Սոցիալական, առողջապահության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Գայանե Լալայանի լիազորությունները:
Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

1. Դիլիջան համայնքի ավագանու 2021թվականի նոյեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին>> թիվ 007-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ, մասնավորապես՝ համայնքի ավագանու <<Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Գոհար Ղազարյանի փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկել Հասմիկ Վարդանյանին, <<Սոցիալական, առողջապահության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Գայանե Լալայանի փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկել Արմինե Հովհաննիսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Համայնքի ղեկավարը <<Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Գոհար Ղազարյանի փոխարեն առաջարկեց ընդգրկել Հասմիկ Վարդանյանին, Ավագանու անդամ Արմինե Հովհաննիսյանը <<Սոցիալական, առողջապահության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի Դիլիջան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի>> անդամ Գայանե Լալայանի փոխարեն առաջարկեց իր թեկնածությունը:
Համայնքի ավագանին քվեարկությամբ (կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց 2 առաջարկությունները:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 679-Ա/

Լսեցին
***ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Համաձայն ՀՀ կառավարության 15.07.2021թ. թիվ 1169-Ն, 29.09.2022թ. թիվ 1485-Ն, 19.10.2023թ. թիվ 1808-Ն և 28.12.2023թ. թիվ 2323-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի միջև կնքված 22.03.2024թ. թիվ Դ-ԴՄ-2024 պայմանագրի, Դիլիջան համայնքին դրամաշնորհի ձևով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով) տրամադրվել է 2 658 400 (Երկու միլիոն վեց հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ ֆինանսական միջոց՝ սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման նպատակով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 2 658 400 (Երկու միլիոն վեց հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել որպես եկամուտ:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 2 658 400 (Երկու միլիոն վեց հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել ծախս՝ Դիլիջան համայնք /Նախադպրոցական կրթություն/ «09-01-01» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին՝ 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 680-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Համաձայն Դիլիջանի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև կնքված կապիտալ սուբվենցիայի հատկացման 01.04.2024թ. թիվ 5 պայմանագրի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացվել է 73 179 000 (յոթանասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիա՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամարինի 1 հասցեից մինչև Օրջոնիկիձեի 57 շարունակելով դեպի Կամարինի 37 հասցե ընկած ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների համաֆինանսավորման նպատակով: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է նշված գումարը ճանաչել որպես եկամուտ և ծախս /Ճանապարհային տրանսպորտ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմամբ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 73 179 000 (յոթանասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիան ճանաչել որպես եկամուտ՝ սուբվենցիոն եկամտային հաշվին:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 73 179 000 (յոթանասուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիան ճանաչել ծախս և ուղղել Դիլիջան համայնք /Ճանապարհային տրանսպորտ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման սուբվենցիոն ծախսային հաշվի 5113 հոդվածին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 681-Ն/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 203***

***ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 30.7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մարտի 18-ի թիվ 371-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 203 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սամվել Սևանի Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 61. 56քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 28032024-11-0052/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սամվել Հարությունյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 203 հասցեի ավտոտնակը՝ 61.56քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 30.7քմ հողամասը, համապատասխանաբար, 142573 դրամ և 209814 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 30.7քմ հողամասը քաղ. Սամվել Սևանի Հարությունյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 203 հասցեի ավտոտնակը՝ 61.56քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 30.7քմ հողամասը, համապատասխանաբար, 142573 դրամ և 209814 դրամ արժեքներով քաղ. Սամվել Սևանի Հարությունյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 682-Ա/

Լսեցին
***ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏՍՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներագախնայողության հիմադրամը «Մեծաթիվ բնակչությանն ուղղված ԷԽ ևՎԷ բարձր ազդեցությամբ ցուցադրական-պիլոտային միջոցառումների» ծրագրի շրջանակում պատրաստակամություն է հայտնել Դիլիջան համայնքում իրականցնել արևային ֆոտովոլտային կայանների տեղակայման միջոցառումներ: Համայնքի ղեկավարի կողմից առաջարկվել է նշված միջոցառումները /Արևային ՖՎ կայանների տեղադրում/ իրականացնել «Մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի շենքում, որը գտնվում է վերանորոգման փուլում՝ սուբվենցիոն ծրագրերի

շրջանակներում: Նշված ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12 000 000 ՀՀ դրամ, որից համայնքը պետք է կատարի համաֆինանսավորման իր մասնաբաժինը 2 400 000 ՀՀ դրամ գումարի չափով, այն է ծրագրի ընդհանուր արժեքի 20%-ը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 42-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Տալ հավանություն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներագախնայողության հիմադրամի կողմից առաջարկվող միջոցառումների իրականացմանը /Արևային ՖՎ կայանների տեղադրում/:

2. Թույլատրել ծրագրի իրականացման համար կատարել համաֆինանսավորում ծրագրի ընդհանուր արժեքի 20%-ի չափով:

3. Պահուստային ֆոնդից հատկացնել 2 400 000 ՀՀ դրամ «08-02-03» Դիլիջան համայնք /Մշակույթի տներ , ակումբներ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5511 /Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և (կամ) կապիտալ ակտիվի ձեռք բերում/ հոդվածին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 683-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 1156.5ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 1156.5քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 1156.5քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 684-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 32.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 32.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 32.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 685-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՋՐԱՉԱՓԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Պետության կողմից նպատակային հատկացումների (սուբվենցիաների) շրջանակներում Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում 2024 թվականին նախատեսվում է իրականացնել խմելու ջրագծերի հիմնանորոգման և ջրաչափերի տեղադրման աշխատանքներ: Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի այն պետք է ենթարկվի ՇՄԱԳ փորձաքննության:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի» 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում խմելու ջրագծերի և ջրաչափերի տեղադրման աշխատանքների ՇՄԱԳ փորձաքննությանը և աշխատանքների իրականացմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 686-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 8143.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 9 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 8143.9քմ ընդհանուր մակերեսով թվով 9 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 8143.9քմ ընդհանուր մակերեսով թվով 9 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 687-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Համաձայն Դիլիջանի համայնքապետարանի և «Ֆոքքս Օն Չիլդրեն Նաու, ինկ» ԲԿ-ի միջև 23.11.2023թ. կնքված «Խաղահրապարակի պահատվության և բարեկարգման» պայմանագրի, Դիլիջան քաղաքի «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տարածքում տեղադրվել է խաղահրապարակ, որի ընդհանուր արժեքը կազմում է 2 394 000 ՀՀ դրամ, որից համայնքը պետք է կատարի համաֆինանսավորման իր մասնաբաժինը, որը կազմում է 239 400 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժեքի 10%-ը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, համաձայն Դիլիջան համայնքի ավագանու 14.12.2023թ. թիվ 547-Ն որոշման պահանջների՝ Դիլիջան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02, «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 239 400 /երկու հարյուր եռեսունինը հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ հատկացնել «09-01-01» Դիլիջան համայնք /Նախադպրոցական կրթություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5511 /համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և (կամ) կապիտալ ակտիվի ձեռք բերում/ տնտեսագիտական հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 688-Ն/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 82/8 ՀԱՍՑԵԻ 9.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Նաիրա Մերուժանի Մանուչարյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 82/1 հասցեի, իրեն

սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 32.0քմ հողամասին կից գտնվող /Գետափնյա փողոց թիվ 82/8 հասցեի/ 9.8քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 9.8քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 82/8 հասցեի 9.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 103036 /հարյուրերեք հազար երեսունվեց/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Նաիրա Մերուժանի Մանուչարյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոց թիվ 82/8 հասցեի 9.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 103036 /հարյուր երեք հազար երեսունվեց/ ՀՀ դրամ արժեքով քաղաքացի Նաիրա Մերուժանի Մանուչարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 689-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0325-0033 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 207.0քմ հողամասը, 11-003-0325-0033 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 18.1քմ հողամասը և 11-003-0325-0096 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 784.0քմ հողամասը կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0325-0033 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 207.0քմ հողամասը, 11-003-0325-0033 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 18.1քմ հողամասը և 11-003-0325-0096 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 784.0քմ հողամասը, որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 690-Ա/

Լսեցին
***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ 33.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել «Բելվիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս լիազորված անձ Վարդան Հախվերդյանի, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 29 հասցեի, «Բելվիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2447.3քմ հողամասին կից գտնվող /Մյասնիկյան փողոց թիվ 21 հասցեի/ 33.0քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով «Բելվիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 33.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 21 հասցեի 33.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 346956 / երեք հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ արժեքով օտարել «Բելվիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 21 հասցեի 33.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 346956 / երեք հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ արժեքով «Բելվիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարելու

համայնք /Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 8 000 000 /ութ միլիոն/ ՀՀ դրամ, «05-06-01» Դիլիջան համայնք /Շրջակա միջավայրի պաշտպանություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/տնտեսագիտական հոդվածին՝ 3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ, «08-02-07» Դիլիջան համայնք /Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին՝ 3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ:

3. Համայնքի ղեկավարին՝ պատվիրել վերը նշված ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 667-Ա/

Լսեցին

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի ապրիլի 12-ին, ժամը 17-ին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 668-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԱՒԼՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ Դիլիջան համայնքի ղեկավար*

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Սոնա Եգանյանը

_____